Հավելված 2.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

1948 թ. դեկտեմբերի 9-ին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունեց **Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիան**, որի համատեքստում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը բարձրացվեց որակապես նոր մակարդակի: Այս գործընթացի կայացման գործում հիմնարար նշանակություն է ունեցել 1965թ. ապրիլի 20-ի իրադարձությունը՝ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի կապակցությամբ Ուրուգվայի Արևելյան Հանրապետության Սենատի և Ներկայացուցիչների պալատի կողմից բանաձևի ընդունումը, որտեղ, մասնավորապես, գրված է. *«Առաջիկա ապրիլի 24-ը հայտարարվում է «Հայ նահատակների հիշատակի օր»՝ նվիրված 1915 թ. այդ ազգության ներկայացուցիչների կոտորածներին զոհ գնացածներին»*: Հետագա տասնամյակներին Հայոց ցեղասպանությունը ճանաչել են ևս երեք տասնյակ պետություններ, բազմաթիվ միջազգային կազմակերպություններ:

1945-1965 թթ. ընթացքում հայկական հողերի վերադարձի խնդիրը բազմիցս բարձրաձայնվել է, սակայն որևէ հանգուցալուծում չստանալով՝ այն ժամանակի ընթացքում ակամայից ստորադասվեց ժխտողականության դեմ մղվող պայքարի մարտավարությանը՝ ի դեմս զանազան երկրների խորհրդարանների, միջազգային կազմակերպությունների կողմից հայանպաստ փաստաթղթերի ընդունման: Դրանք կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝

- **Հայտարարություն-հռչակագրեր** - հայտարարությունները, թերևս, իրենց իրավական ուժով ամենաթույլն են և, որպես կանոն, միայն արձանագրում են տվյալ երկրի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման փաստը, այդ կապակցությամբ ցավակցում հայ ժողովրդին կամ ապրիլի 24-ը հայտարարում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր:
- **Բանաձև-որոշումները** բովանդակային առումով շատ չեն տարբերվում հայտարարություններից, սակայն իրավական առումով ավելի կարևոր փաստաթղթեր են:
- **Օրենքներն** իրավական փաստաթղթեր են, որոնք որոշ երկրներում նաև պատիժ են նախատեսում Հայոց ցեղասպանության փաստի ժխտման համար: Սակայն ճանաչման օրենքների ընդունումը հատուցման հասնելու տեսանկյունից որևէ արդյունք չի կարող ապահովել:

Հոլոքոստին նվիրված ավելի քան վեց տասնյակ թանգարաններ և ցուցադրություններ են գործում աշխարհի բազմաթիվ երկրներում, ևս ինը տասնյակ հրեից թանգարաններ կան, որոնք նույնպես, այս կամ այն չափով, անդրադառնում են Հոլոքոստի թեմային:

Իրականում Հայոց ցեղասպանությունն աշխարհում քիչ ճանաչված իրողություն է: Հայոց ցեղասպանությանը նվիրված ընդամենը մեկ լիարժեք թանգարան (հետազոտական բաղադրիչով) է գործում, թանգարան-ցուցադրություններ կան Լոս Անջելեսում և Բեյրութում, առկա են մի քանի թանգարաններ Հայոց ցեղասպանությանը նվիրված փոքրածավալ ցուցադրությունների հատվածներով: Հոլոքոստի թեման զգալի խորությամբ դասավանդվում է աշխարհի բազմաթիվ երկրների հանրակրթական դպրոցներում, մինչդեռ նույնը չի կարելի ասել Հայոց ցեղասպանության մասին: Այս տեսանկյունից Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումները որոշ չափով նպաստում են թեմայի հանրահռչակմանը, իրավական տեսանկյունից նպաստավոր պայմաններ են ստեղծում վիճակի կարգավորման համար՝ թանգարան-ցուցադրություններ բացելու և դասավանդման հարցի անհրաժեշտությունը բարձրաձայնելու ու հիմնավորելու առումով: Ճանաչումները խիստ կարևոր են տվյալ երկրների հայկական համայնքների համար առաջին հերթին բարոյական առումներով, քանի որ, այդ կերպ, վերականգնվում է պատմական ճշմարտությունը և պատմական արդարությունը: Շատ երկրներում գերազանցապես հայ համայնքի լոբբիստական ջանքերով ձեռք բերված *Ճանաչման փաստով*, իրավական տեսանկյունից, ավելի նպաստավոր պայմաններ է ստեղծվում Հայոց ցեղասպանության թեման հանրության լայն խավերին մատուցելու, այն տվյալ երկրի բնակչության պատմական հիշողության մաս դարձնելուն ուղղված քայլեր ձեռնարկելու առումով: Վերջապես, ճանաչումը նաև ազգային անվտանգության խնդիր է, քանի որ, այս կամ այն չափով, նպաստում է Հայաստանի Հանրապետության հանդեպ նոր ցեղասպանության կանխարգելմանը:

Առ այսօր Հայոց ցեղասպանությունը ճանաչվել է 35 երկրի խորհրդարանների և կառավարությունների կողմից:[1][2]

Երկիր	Տարի(ներ)
1. ԱՄՆ	2019, 2021
2. Ավստրիա	2015
3. Արգենտինա	1993, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2015
4. Բելգիա	1998, 2015
5. Բոլիվիա	2014
6. Բրազիլիա	2015

[1] https://en.wikipedia.org/wiki/Armenian_genocide_recognition
[2] shorturl.at/ayF45 (Arm Wiki)

7. Բուլղարիա	2015
8. Գերմանիա	2005, 2016
9. Դանիա	2015
10. Իտալիա	2000, 2019
11. Լատվիա	2021
12. Լեհաստան	2005
13. Լիբանան	1997, 2000
14. Լիբիա	2019
15. Լիտվա	2005
16. Լյուքսեմբուրգ	2015
17. Կանադա	1996, 2002, 2004, 2006
18. Կիպրոս	1975, 1982, 1990
19. Հունաստան	1996
20. Մեքսիկա	2023
21. Նիդերլանդներ	2014, 2015, 2018
22. Շվեդիա	2010
23. Շվեյցարիա	2003
24. Չեխիա	2017, 2020
25. Չիլի	2007, 2015
26. Պարագվայ	2015
27. Պորտուգալիա	2019
28. Ռուսաստան	1995, 2005, 2015
29. Սիրիա	2020
30. Սլովակիա	2004
31. Սլովենիա	2004
32. Վատիկան, «Սուրբ Աթոռ»	2000, 2015
33. Վենեսուելա	2005
34. Ուրուգվայ	1965, 2004, 2015
35. Ֆրանսիա	1998, 2001

Փաստաթուղթը պատրաստվել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հարություն Մարությանի կողմից տրամադրված նյութերի հիման վրա: